Իրավունքների հռչակագիրը

ՓԱՆԻ ՈՐ ԲԱԶՄԱԹԻՎ ՓԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՐԿՕՒՂԵՑԻՆ, ՈՐ ԱՄՆ ՍԱՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԶԱՓԻՑ ԱՎԵԼԻՆ ԿՀԶՈՐՈՐԱՆԱ, ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐՎԵՑԻՆ՝ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԽՈՍՔԻ, ՄԱՄՈՒԼԻ, ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՅԼ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ: ՏԱՄՆՅԱԿՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ: ԱՅՍՕՐ ՆՐԱՆՔ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ:

Փոփոխություն I

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Կոնգրեսը չպետք է ստեղծի այնպիսի օրենք, որը կրոն սահմանի կամ արգելի դավանանքի ազատ իրականացումը, կամ սահմանափակի խոսքի կամ մամուլի ազատությունը, կամ խաղաղորեն ժողովվելու և կառավարությանը զանգատների բավարարման համար խնդրագիր ներկայացնելու ժողովրդի իրավունքը:

Փոփոխություն II

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Կամ կարգավորված աշխարհազորի՝ ազատ պետության անվտանգությանը անհրաժեշտ լինելով հանդերձ, մարդկանց զենք ունենալու և կրելու իրավունքը չպետք է ոտնահարվի:

Փոփոխություն III

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Ոչ մի զինվոր, խաղաղ ժամանակ, չպետք է տեղավորվի որևէ տան մեջ՝ առանց սեփականատիրոջ համաձայնության. ոչ էլ պատերազմի ժամանակ, բացառությամբ օրենքով սահմանված կարգով:

Փոփոխություն IV

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Մարդկանց իրավունքն իրենց անձի, տան, փաստաթղթերի և ունեցվածքի անխոհեմ խուզարկումների և բռնագրավումների դեմ չպետք է խախտվի; և խուզարկության կամ ձերբակալման կարգադրագրեր չպետք է արձակվեն այլ կերպ, քան հավանական հիմքերը հաստատող երդման հայտարարության վրա հիմնվելով; և մասնավորապես նկարագրելով խուզարկելի վայրը և ձերբակալելի անձանց ու բռնագրավման ենթակա առարկաները:

Փոփոխություն V

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Մահապատիժ կամ ազատազրկում նախատեսող հանցագործության համար ոչ մի անձ չպետք է պատասխանատվության կանչվի այլ կերպ, քան երդվյալատենակալների դատարանի դատապարտագրի կամ ամբաստանագրի հիման վրա, բացառությամբ այն գործերի, որոնք հարուցվում են ցամաքային կամ ծովային ուժերում, կամ աշխարհազորի ուժերում՝ պատերազմի կամ հանրային վտանգի

ժամանակ փաստացի ծառայության մեջ գտնվելիս. ոչ մի անձ չպետք է կրկնակի անգամ դատվի մահապատիժ կամ ազատազրկում նախատեսող միևնույն հանցագործության համար. ոչ էլ պետք է հարկադրվի իրեական գործում ինքն իր անձի դեմ ցուցմունք տալու. ոչ էլ պետք է զրկվի կյանքից, ազատությունից կամ ունեցվածքից՝ առանց օրենքի պատշաճ կիրառման. ոչ էլ մասնավոր սեփականությունը պետք է օտարվի հանրային օգտագործման նպատակով՝ առանց արդար փոխհատուցման:

Փոփոխություն VI

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Բոլոր իրեական դատավարություններում, ամբաստանյալը պետք է ունենա արագ և հրապարակային դատավարության իրավունք՝ անկողմնակալ երդվյալ ատենակալների դատարանի կողմից այն նահանգում և շրջանում, որտեղ ոճիրը գործվել է, և որպիսի շրջանը նախապես հաստատագրվել է օրենքով; ամբաստանության պատճառի և բնույթի մասին տեղյակ պահվելու իրավունք; իր դեմ գործով վկաների հետ առերեսվելու իրավունք; ի նպաստ իրեն վկաներ ձեռք բերելու համար դատարանից կարգադրագիր ստանալու իրավունք; և իր անձի պաշտպանություն համար փաստաբան ունենալու իրավունք:

Փոփոխություն VII

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Ընդհանուր օրենքի հայցերի դեպքում, երբ վեճի գումարը գերազանցում է հատ դոլար, պետք է պահպանվի երդվյալ ատենակալների կողմից դատվելու իրավունքը, և ոչ մի փաստարկ, որի վերաբերյալ երդվյալ ատենակալները կայացրել են վճիռ, չպետք է վերաքննվի Միացյալ



Ներկայացուցիչ Ջեյմս Մեդիսոնը կարևոր դեր է խաղացել՝ Փոփոխությունների ընթացակարգը Կոնգրեսում ուղղորդելու և այնուհետև վավերացումն իր իսկ Վիրջինիա նահանգում արագացնելու առումով : ©AP Images

Նահանգների որևէ դատարանի կողմից այլ կերպ, հատ ընդհանուր օրենքի կանոններին համապատասխան:

Փոփոխություն VIII

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Չափազանցված երաշխավորագրեր չպետք է պահանջվեն, ոչ էլ չափազանցված տուգանքներ պետք է պարտադրվեն, ոչ էլ դաժան և արտասովոր պատժամիջոցներ պետք է նշանակվեն:

Փոփոխություն IX

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Սահմանադրության մեջ որոշակի իրավունքների թվարկումը չպետք է հիմք հանդիսանա մարդկանց ունեցած այլ իրավունքների ուրացման կամ նսեմացման համար:

Փոփոխություն X

(Վավերացված 1791 թվականի դեկտեմբերի 15–ին)

Սահմանադրությամբ Միացյալ Նահանգներին չպատվիրակված կամ էլ նահանգներին չարգելված իրավասությունները վերապահվում են նահանգներին կամ ժողովրդին:

Փոխնախագահ Ջոն Ադամսը նախագահում էր ԱՄՆ Սենատում երբ Կոնգրեսի այդ պալատը հաստատեց Փոփոխությունները ©AP Images